ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2022 թվականի N 62 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 67- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2022 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ԳՍ/20.1/30867-2021 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մինչև 2022 թվականի մարտի 25-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ
16.02.2022

X
ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

15 փետրվարի 2022թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի

15 փետրվարի 2022 թվականի 62 -Ա որոշման

2022 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

Հ/հ	Համայնքի անվանումը	Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Իջևան	փետրվարի 18-25	ՏԻՄ լիազորություններ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ	Նարեկ Ղուշչյան Աղաբեկ Գալստյան, Տաթևիկ Անտոնյան, Խանում Մարգարյան
			անձնակազմի կառավարման բաժին	Խմբի անդամ	Թերեզա Սաֆարյան
			առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն	Խմբի անդամ	Գուրգեն Հարությունյան
			արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն	Խմբի անդամ	Սամվել Սուքոյան
			ֆինանսներ		Ասքանազ Բաբլունյան, Ժորա Խաչատրյան, Աննա Մանգասարյան
			քաղաքաշինություն	Խմբի անդամ	Միսակ Մելքումյան
			հողաշինություն և հողօգտագործում	Խմբի անդամ	Համլետ Փիրումյան

2.	Նոյեմբերյան	մարտի 10-17	ՏԻՄ լիազորություններ	Խմբի ղեկավար, Խմբի անդամ	Նարեկ Ղուշչյան Աղաբեկ Գալստյան, Տաթևիկ Անտոնյան, Խանում Մարգարյան
			անձնակազմի կառավարման բաժին	Խմբի անդամ	Թերեզա Սաֆարյան
			առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն	Խմբի անդամ	Գուրգեն Հարությունյան
			արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն	Խմբի անդամ	Սամվել Սուքոյան, Նարինե Արամյան
			ֆինանսներ		Ասքանազ Բաբլունյան, Ժորա Խաչատրյան, Աննա Մանգասարյան
			քաղաքաշինություն	Խմբի անդամ	Միսակ Մելքումյան, Արմեն Ճաղարյան
			հողաշինություն և հողօգտագործում	Խմբի անդամ	Համլետ Փիրումյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ